ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԱԼԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Փիլիսոփայության պատմությունը որպես ամբողջական համակարգ ձևավորել է Հեգելը: Մինչ այդ այն իմաստասերների սուր պատմությունների, ասացվածքների, անեկդոտների խառնիճաղանջ հավաքածու էր: Հեգելը որոշակի տրամաբանություն մտցրեց այդ ամենի մեջ, սակայն ապրիորիստական դիրքերից: Ուստի եվրոպական փիլիսոփայության պատմության հիմնադիրը համարվում է Էդուարդ Ցելլերը: Նկատենք, որ նրա «Հունական փիլիսոփայության պատմության ակնարկը»[1] քսան անգամ հրատարակվել է Գերմանիայում, թարգմանվել է եվրոպական բոլոր լեզուներով: Երեք անգամ հրատարակվել է նաև մինչհեղափոխական Ռուսաստանում: Հարց է առաջանում. ինչո՞վ է պայմանավորված Է. Ցելլերի աշխատության այդ հանրանշանակությունը: Որո՞նք են փիլիսոփայության պատմության և ընդհանրապես փիլիսոփայական գիտելիքների, ավելի ճշգրիտ՝ փիլիսոփայական վարկածների ընդունման, համընդհանուր ճանաչման չափանիշները: Թվում է՝ պլյուրալիզմի, մարքսիզմի համընդհանուր քննադատության ներկա ժամանակաշրջանում նման հարցադրում կատարելը տեղին և ճիշտ չէ: Սակայն, գտնում ենք, որ փիլիսոփայական գիտելիքն ունի գիտելիքներին, կարելի է ասել՝ գիտական գիտելիքին բնորոշ բոլոր հիմնական հատկությունները, իհարկե նաև իր առանձնահատկությունները: Չգիտես ինչու՝ մինչև օրս գիտական գիտելիքը հիմնականում նույնացնում են մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների հետ: Մեր կարծիքով, բոլոր այն գիտելիքները, այդ թվում նաև փիլիսոփայականները, որոնք առօրեական գիտելիքներ չեն, գիտական են, պարզապես դրանք սահմանային, հումանիտար են՝ իրենց յուրահատկություններով հանդերձ:

Այժմ փորձենք պարզաբանել, թե որոնք են Է. Ցելլերի աշխատության հանրանշանակության չափանիշները: Ասենք, որ այդ աշխատությունը դասընթաց է և օժտված է նման աշխատություններին հատուկ բոլոր առանձնահատկություններով: Բացի այդ, թեև ավելի քան հարյուր տարվա ընթացքում հնացել են դրանում առկա որոշ գնահատականներ, այդուամենայնիվ այն չի կորցրել իր արժեքն ու թարմությունը:

[1] Տե՛ս **Эдуард Целлер**. Очерк истории греческой философии. СПб., 1996:

Փիլիսոփայության պատմության գրականության մեջ նշվում է. «Առաջինը հենց Է. Ցելլերն է մանրակրկիտ ուսումնասիրել, համադրել իր ժամանակ գոյություն ունեցող (անտիկ հունական) գործնականում բոլոր աղբյուրները և աղբյուրագիտությունը հաստատել որպես պատմա-փիլիսոփայական վերլուծության անհրաժեշտ նախադրյալ»[2]: Թեև Է. Ցելլերը սահմանափակվել է անտիկ հունական փիլիսոփայության պատմության շարադրմամբ, այնուամենայնիվ նրա մոտեցումը բնութագրական է ողջ փիլիսոփայության պատմությանը: Է. Ցելլերը անտիկ հունական փիլիսոփայության պատմության շարադրանքով ցույց է տվել, որ այն պետք է հենվի աղբյուրների արտաքին ու ներքին անաչառ քննադատությունների, դրանցում առկա տվյալների, փաստերի վրա:

Քանի որ անտիկ հունական փիլիսոփաների երկերը մեզ են հասել առանձին պատառիկներով՝ բացառությամբ Պլատոնի և Արիստոտելի աշխատությունների (դրանք էլ՝ որոշ վերապահումներով), ապա Է. Ցելլերն այդ ուսմունքները ներկայացնելիս հենվել է ոչ միայն իր ժամանակներում հայտնի 126 հատվածների, պատառիկների, այլև, մեր կարծիքով, տվյալ ժամանակի փիլիսոփայական, սոցիալ-մշակութային ընդհանուր պատկերի վրա: Այսպես, Հերակլիտեսի հայացքները շարադրելիս նա բծախնդրորեն նշել է համապատասխան արտահայտության տեղը (հատվածը)՝ ստուգելի դարձնելով միտքը[3]: Միաժամանակ արել է մեկնաբանություններ, որոնք բնութագրական են այդ ժամանակաշրջանի, սոցիալ-մշակութային ամբողջականությանը: Դա ավելի հավաստիանման է դարձրել Հերակլիտեսի հայացքների շարադրանքը:

Նույն կերպ, Պլատոնի և Արիստոտելի ուսմունքներն ավելի հավաստիանման են, քանի որ, ինչպես վերը նշեցինք, նրանց աշխատությունները մեզ հասել են ավելի ամբողջական վիճակով, քան մյուս հին հույն փիլիսոփաներինը: Ուստի Է. Ցելլերն իր աշխատությունում Պլատոնի և Արիստոտելի ուսմունքները շարադրել է ավելի պարզ, հստակ, համակարգված, ամբողջական: Պատահական չէ, որ փիլիսոփայության պատմության որոշ մասնագետներ կարծում են, որ փիլիսոփայության իրական պատմությունը պետք է սկսել XVII դարից՝ պատճառաբանելով, որ այդ շրջանի փիլիսոփաների աշխատությունները մեզ են հասել ավելի ամբողջական:

Հաջորդ պրոբլեմը փիլիսոփայության պատմության գործընթացի ըմբռնումն է: Հարց է ծագում՝ արդյոք փիլիսոփայության պատմությունը փիլիսոփաների՝ ժամանակի մեջ դասակարգված ուսմունքների ամբողջությո՞ւն է, թե՞ ավելին է:

---

[2] **Светлов Р. В.** Эдуард Целлер: философ, учитель, историк // **Эдуард Целлер**. Очерк истории греческой философии. СПб., 1996, с. 6.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 62-66:

Է. Ցելլերի աշխատության մեջ փիլիսոփաները և նրանց ուսմունքները դասակարգված են մանրամասնորեն, ժամանակագրական հերթագայությամբ, ոչ միայն ըստ առանձին փիլիսոփաների ուսմունքների, դպրոցների, ուղղությունների, այլև ըստ հիմնահարցերի և դրանց կառուցվածքային լուծումների, որոնք որպես ամբողջ ավելին են, քան առանձին փիլիսոփայական ուսմունքները: Ճիշտ է, փիլիսոփայական գրականության մեջ կան նաև այլ դասակարգումներ, օրինակ՝ Վ. Վինդելբանդի, Հոմպերցի և այլոց, սակայն Է. Ցելլերի շարադրանքն աչքի է ընկնում մանրակրկիտությամբ: Բացի այդ, նկատենք, որ տարբեր դասակարգումների հնարավորությունը չի նշանակում, որ փիլիսոփայության պատմությունը այն շարադրողների քմահաճույքի արգասիք է: Գոյություն ունի ժամանակագրություն, փիլիսոփայական հիմնահարցերի, դրանց կառուցվածքային լուծումների ընթացք՝ կայուն միտումներով: Հենց դրանց միջոցով է դրսևորվում փիլիսոփայության պատմության ներքին տրամաբանությունը: Դա իհարկե չի նշանակում նաև, որ փիլիսոփայական ուսմունքները ներքին տրամաբանության ծավալման արդյունք են:

Յուրաքանչյուր փիլիսոփայական ուսմունք որոշակիորեն եզակի է և առանձնահատուկ, դրանում արտացոլված են նույնիսկ հեղինակի անձնային յուրահատկությունները: Է. Ցելլերը փիլիսոփայական ուսմունքների, գաղափարների ընդհանրությունները և առանձնահատկությունները ճշգրտորեն բացահայտել է նմանատիպ այլ ուսմունքները, գաղափարները համեմատելով կամ, ավելի որոշակի՝ պատմահամեմատական մեթոդի միջոցով: Ավելի քիչ է օգտագործված հետահայաց (ռետրոսպեկտիվ) մեթոդը, որի էությունն այն է, որ ժամանակագրական առումով ավելի ուշ ասպարեզ եկած ուսմունքների, գաղափարների միջոցով գնահատվում են նախորդ ուսմունքները, գաղափարները, ցույց է տրվում դրանց յուրահատկությունը[4]:

Այսպիսով, Է. Ցելլերի փիլիսոփայության պատմության գիտելիքի հանրանշանակությունը, մեր կարծիքով, պայմանավորված է մի շարք գործոններով.

1. Է. Ցելլերի աշխատությունում առավել լրիվ, պարզ, ճշգրիտ բացահայտված է դրանում շարադրված ուսմունքների բովանդակությունը: Դրանք հենվում են աղբյուրների համընդգրկման, արտաքին ու ներքին քննադատությունների, լեզվական տերմինների ճշգրտման, դրանցում առկա տվյալների, փաստերի վրա:

2. Այն դեպքերում, երբ փաստերը բավարար չեն եղել ուսմունքները ներկայացնելու համար, նա դիմել է տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային, փիլիսոփայական համընդհանուր պատկերացումներին:

---

[4] Տե՛ս **Ա. Ս. Ղազարյան,** Պատմության առարկան, գործառույթները և հիմնական մեթոդները // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն, № 3 (24), Եր., 2017, էջ 51-53:

3. Ուսմունքները շարադրված են պարզ, հստակ, անհակասական, համակարգված, հնարավորինս ամբողջական, լրիվ:

4. Է. Ցելլերը ոչ միայն ճշգրտորեն ներկայացրել է անտիկ փիլիսոփայական ուսմունքների բովանդակությունը, այլև ցույց է տվել դրանց կապերը, ազդեցությունները, փոխառությունները նախորդ ուսմունքներից և այդ ուսմունքների ազդեցությունները ժամանակի ընթացքում դրանց հաջորդած ուսմունքների վրա, վերջիններիս գնահատականները դրանց նախորդած ուսմունքներին:

Այժմ պարզաբանենք, թե ինչպես են գրվել հայ փիլիսոփայության պատմության մասին առաջին աշխատությունները: Դրանք 20-րդ դարում մշակել, դասակարգել, համակարգել են պրոֆեսորներ Վ. Կ. Չալոյանը և Հ. Գ. Գաբրիելյանը: Անշուշտ, ծանր և գնահատելի գործ է կատարվել, խմբավորվել, դասակարգվել, ամբողջական տեսքի է բերվել նախորդ դարերի հայոց փիլիսոփայական միտքը: Չպետք է մոռանալ, որ այդ աշխատությունները գրվել են խորհրդային իշխանության ժամանակներում, որտեղ տիրապետող էր դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը, այսինքն՝ մարքսիստական փիլիսոփայությունը: Բնականաբար, այդ իրողությունն իր կնիքն է թողել վերը նշված աշխատությունների վրա: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է, թե ինչպես, ինչ չափանիշներով է կառուցվել հայոց փիլիսոփայության պատմությունը որպես գիտելիք, և ինչով է այն ընդհանրական ու տարբեր Է. Ցելլերի մոտեցումից: Մենք որպես ուսումնասիրության առարկա վերցրել ենք պրոֆեսորներ Վ. Կ. Չալոյանի և Հ. Գ. Գաբրիելյանի կենդանության օրոք լույս տեսած վերջին աշխատությունները[5]:

Պրոֆեսոր Հ. Գ. Գաբրիելյանը «Հայ փիլիսոփայության պատմություն» աշխատությունը հրատարակել է նախ չորս հատորով[6], ապա 1972 թվականին մշակել, հրատարակել է ռուսերեն՝ մեկ հատորով և 1976 թվականին, կրկին վերամշակելով, հրատարակել է հայերեն:

Հ. Գաբրիելյանն իր գործի առաջաբանում գրել է այն գլխավոր գաղափարի, վարկածի մասին, որն անցնում է ամբողջ աշխատության միջով. «Հեղինակն այդ պատմությունը դիտում է որպես մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի պատմություն, որը, փաստորեն, դասակարգային պայքարի պատմության արտացոլումն է գաղափարախոսության բնագավառում...»[7]: Վերջաբանում նա, շարունակելով այդ նույն միտքը, նկատում է. «Այսպիսով, հայ փիլիսոփայության մտքի պատմությունը մատերիալիզմի և իդեալիզմի անհաշտ պայքարի պատմություն է, որի բնականոն զարգացումը հանգեցրեց մարքսիզմի հաղթանակին նաև

---

[5] Տե՛ս **Վ. Կ. Չալոյան,** Հայոց փիլիսոփայության պատմություն (հին և միջին դարեր), Եր., 1975, **Հ. Գ. Գաբրիելյան,** Հայ փիլիսոփայության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Եր., 1976:

[6] Տե՛ս **Հ. Գ. Գաբրիելյան,** Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, չորս հատորով, Եր., 1956-1965:

[7] **Հ. Գ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայության պատմություն, էջ 4:

հայության մեջ: Այսօր մարքսիզմը մեր երկրում տիրապետող է, և գիտական միտքը զարգանում է մարքսիզմ-լենինիզմի գծած ուղիով: Սփյուռքահայ առաջավոր մտավորականությունը ևս, տարերայնորեն կամ գիտակցորեն, հարելով մատերիալիզմին, համառ պայքար է մղում իդեալիզմի դեմ՝ հանուն սփյուռքահայ աշխատավորության մատերիալիստական դաստիարակության, մարքսիզմ-լենինիզմի վերջնական հաղթանակի ամբողջ աշխարհում»[8]: Այժմ այդ թեզը ոչ մի քննադատության չի դիմանում: Համանման մոտեցում ունի նաև պրոֆեսոր Վ. Կ. Չալոյանը: Նա փիլիսոփայության պատմությունը դիտարկել է որպես բնության, հասարակության և մարդկային մտածողության առավել ընդհանուր օրենքների մասին գիտության առաջացում և զարգացում: Ընդ որում, ինչպես Հ. Գ. Գաբրիելյանը, Վ. Կ. Չալոյանը ևս գտնում է, որ փիլիսոփայության պատմությունը մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի պատմություն է, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս բնորոշմամբ՝ «իդեալիզմը, որպես խոտորում ճանաչողության պրոցեսում, ոչ միայն անհիմն չէ, այլև զուրկ չէ հաճախ իր մեջ շատ ռացիոնալ մոմենտներ կրելու հնարավորությունից»[9]: Ավելի ներքևում նա շարունակում է. «Շատ բարդ է ընթացել մատերիալիզմի և իդեալիզմի զարգացման պրոցեսը... այս կամ այն երկրում փիլիսոփայության մեջ լինում է մատերիալիզմի տիրապետության և լինում է իդեալիզմի տիրապետության ժամանակաշրջան. մի ուղղությունը պարտություն է կրում և գնում է դեպի անկում, իսկ մյուսը հաղթանակում է, գաղափարախոսության մեջ դառնում տիրապետող: Հենց այդ պատմական հիմքի վրա էլ որոշվում է փիլիսոփայության այդ երկու հիմնական ուղղությունների միջև մղվող պայքարի բնույթը»[10]:

Բերված վարկածների իսկությունը կարելի է ստուգել միայն պատմափիլիսոփայական ճշգրիտ փաստերի միջոցով: Բացի այդ, նկատենք, որ պատմական աշխատությունների շարադրանքը պետք է հնարավորինս անկախ լինի հեղինակի կուսակցական պատկանելությունից, սուբյեկտիվ համակրանքներից, ինչը, ցավոք, չես ասի վերոնշյալ հեղինակների մասին: Գաղափարական կաղապարներն իրենց ազդեցությունն են թողել նրանց աշխատությունների ամբողջ շարադրանքի վրա: Ավելացնենք, որ փիլիսոփայությունը, դրա պատմությունը շատ ավելի հարուստ են, քան թե զուտ մատերիալիզմի և իդեալիզմի հակադրության վարկածի միջոցով այն դիտարկելը:

Փիլիսոփայական ուսմունքները հասկանալու, շարադրելու, գնահատելու հարցում կարևոր է հասարակական միջավայրի դերի դիտարկումը, ինչը պրոֆեսորներ Վ. Չալոյանի և Հ. Գաբրիելյանի աշխատություններում արված է, այդուամենայնիվ ավելի կարևոր է պատ-

---

[8] Նույն տեղում, էջ 494-495:

[9] **Վ. Կ. Չալոյան,** Հայոց փիլիսոփայության պատմություն, էջ 8:

[10] Նույն տեղում, էջ 9:

մամշակութային, տվյալ ժամանակի հարացույցի, աշխարհի ընդհանուր պատկերի դերի դիտարկումը, ինչը բացակայում է*:

Հաջորդ հարցը վերաբերում է պատմականորեն հաջորդափոխվող ուսմունքների առանձնահատկությունները ներկայացնելուն: Դա, ինչպես վերը նշեցինք, կատարվում է պատմահամեմատական և հետահայաց մեթոդների միջոցով: Նախ, տվյալ ուսմունքի բովանդակությունը համեմատվում է դրան նախորդած ուսմունքների բովանդակությունների հետ. որոշվում են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները, փոխառությունները, ապա այդ ուսմունքը գնահատվում է դրան հաջորդած ուսմունքների միջոցով: Այս դեպքում շատ կարևոր է գնահատման ճշգրտության պահպանումը՝ անհատականի միջոցով ընդհանրականի ու նմանի բացահայտումը: Այսպես, Վ. Չալոյանը այդ համեմատությունը հատկապես մանրամասնորեն ներկայացրել է Դավիթ Անհաղթի գաղափարները շարադրելիս: Նրա աշխատությունում ներկայացված են ոչ միայն Դավիթ Անհաղթի գաղափարների առանձնահատկությունները, փոխառությունները, այլև դրանց ազդեցությունը իր ժամանակի և ավելի ուշ ժամանակաշրջանների մտածողների ուսմունքների վրա: Դրանով բացահայտվում են Դավիթ Անհաղթի գաղափարների արժեքավորությունը և փիլիսոփայության պատմության ներքին տրամաբանական ընթացքը: Այսպիսով, փիլիսոփայության պատմության գիտելիքը մի կողմից առանձին մտածողների և նրանց գաղափարների անհատականության, առանձնահատկության, կարևորության բացահայտում է, մյուս կողմից՝ նրանց կողմից առաջադրված հիմնահարցերի, դրանց լուծումների, կառուցվածքների անցում է մի ուսմունքից մյուսին: Կարևորն այն է, որ պատմականորեն հաջորդափոխվող ուսմունքները, մտածողները դիտարկվեն, գնահատվեն ոչ թե մի որևէ ուսմունքի, վարկածի տեսանկյունից, ինչպես դա արել է Հ. Գաբրիելյանը (օրինակ՝ Դավիթ Անհաղթի ուսմունքը նա բնութագրել է որպես մետաֆիզիկական և ոչ դիալեկտիկական), այլև այդ ուսմունքները պետք է ուսումնասիրվեն իրենց ներքին կառուցվածքային առանձնահատկությունների, ամբողջականության բացահայտման դիտանկյունից: Եվ ապա՝ այն դիտարկվի այլ ուսմունքների հետ կապերի ու հարաբերությունների միջոցով:

Վերջում ավելացնենք, որ Հ. Գաբրիելյանը «Հայ փիլիսոփայության պատմություն» աշխատությունը գրել է պաշտպանելով առանձին հեղինակների ուսմունքների շարադրման համամասնությունը, ամբողջականությունը, լրիվությունը, որոնք փիլիսոփայության պատմության գիտելիքի ճանաչման գործոններից են: Բացի այդ, նա աշխատության մեջ ներառել է մինչև իր ժամանակները հայտնի բոլոր հեղինակներին, մինչդեռ Վ. Չալոյանը սահմանափակվել է միայն հին և միջին դարերի

* Փիլիսոփայության պատմության ուսմունքները ներկայացնելիս պատմամշակութային գործոնի դերը առաջիններից մեկը նշել է Վ. Վինդելբանդը:

հայոց փիլիսոփայության պատմության շարադրմամբ:

Քանի որ հայ փիլիսոփայության պատմության նորովի մշակումն ու շարադրումը դեռևս առջևում են, փորձենք ներկայացնել մեթոդաբանական այն չափանիշները, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ է պահպանել փիլիսոփայության պատմության՝ որպես գիտելիքի հանրանշանակությունն ապահովելու համար:

1. Փիլիսոփայության պատմության յուրաքանչյուր հեղինակի գաղափարները շարադրել ճշգրիտ, անհակասական, համակարգված, ամբողջական, հնարավորին չափ պարզ, որոշակի, նրբանկատ, համահավաք, ստուգելի:

2. Նյութը շարադրելիս պետք է պահպանել օբյեկտիվությունը: Հեղինակի կուսակցականությունը, ազգային պատկանելությունը, անձնական համակրանքը հնարավորին չափ քիչ պետք է ազդեն շարադրվող նյութի բովանդակության վրա:

3. Հեղինակներին և նրանց գաղափարները պետք է ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի հասարակական-պատմական, մշակութային, հարացուցային, փիլիսոփայական ամբողջական պատկերի մեջ:

4. Պետք է հնարավորինս լրիվ և ճշգրիտ ցույց տրվեն շարադրվող ուսմունքի բովանդակությունը, առանձնահատկությունները, ընդհանրություններն ու տարբերությունները, փոխառությունները դրան նախորդած ուսմունքներից, գաղափարներից և այն պետք է նաև ճշգրտորեն գնահատվի դրան հաջորդող ուսմունքների կողմից: Պետք է բացահայտվի այդ գաղափարների թողած պատմական ազդեցությունը, ներկայացվի դրանց հաջորդափոխությունը:

5. Պետք է նկատի առնել նաև հեղինակի կենսագրությունը, որն անկասկած կօգնի ավելի լավ հասկանալու տվյալ գաղափարները:

6. Եթե անհրաժեշտ է՝ պետք է կատարել օգտագործված աղբյուրների արտաքին ու ներքին քննադատություն՝ տվյալների, փաստերի ճշգրտությունն ապահովելու համար: Հնարավորինս պետք է ապահովել աղբյուրների լրիվությունը:

7. Պատմականորեն հաջորդափոխվող ուսմունքները պետք է դասակարգել մեծագույն բծախնդրությամբ ու ճշգրտությամբ:

Բանալի բառեր – *Է. Յելլեր, Վ. Կ. Չալոյան, Հ. Գ. Գաբրիելյան, փիլիսոփայության պատմություն, գիտելիքի հանրանշանակություն, օբյեկտիվություն, արտաքին քննադատություն, ներքին քննադատություն, աղբյուրների լրիվություն*

АЛЬБЕРТ КАЗАРЯН – ***О критериях признания истории философии научной дисциплиной.*** – В статье анализируются некоторые труды Э. Целлера, В. Чалояна, Г. Габриэляна и выдвигаются критерии, которым история философии должна соответствовать как научная дисциплина.

Идеи каждого автора следует излагать систематически, полно, целостно, по возможности чётко и верифицируемо. При этом необходимо соблюдать объективность. Партийная, национальная принадлежность и личные симпатии исследо-

вателя не должны влиять на содержание материала. Философов и их идеи следует рассматривать в широком историческом, культурном, философском контексте. Суть, особенности, общность и различия тех или иных учений должны быть исчерпывающе и достоверно раскрыты, оценены и сопоставлены с предшествующими учениями. Следует показать историческую значимость этих идей и учений, их последовательность и преемственность. Надлежит иметь в виду биографические обстоятельства изучаемых авторов, поскольку они сказываются на понимании тех или иных идей. Если требуется проверить используемые источники для уточнения содержащихся в них фактов, нужно обеспечить возможную полноту этих источников.

Ключевые слова: *Э. Целлер, В. Чалоян, Г. Габриэлян, история философии, общезначимость знаний, обьективность, внешняя критика, внутреняя критика, полнота источников*

ALBERT GHAZARYAN – ***On the History of Philosophy as Criteria for Expanding Scientific Knowledge***. – Analyzing the corresponding works of E. Zeller, V. Chaloyan, H. Gabrielyan, the author of the article has set forth criteria for the history of philosophy, namely the acceptance and general recognition of scientific knowledge:

The ideas of each author of the history of philosophy should be stated accurately, inconsistently, systematically, completely, wholly, as clearly as possible, definitely, elegantly, concisely, verifiably.

The objectivity of the article should be preserved when drafting the material. The author's party affiliation, national identity, personal sympathy should have the least influence on the content of the article.

The authors and their ideas should be presented in the full socio-historical, cultural, paradigmatic, philosophical context of the given period.

The content, particularities, similarities, and differences of the stated doctrine, as well as the borrowings and ideas from the teachings preceding it, should possibly fully and accurately be assessed by the doctrines that follow it. The historical impact of those ideas should be revealed and their subsequent transformation presented.

The biographical data of the author, which have an impact on the perception of the ideas expressed in the article, should also be taken into account.

If necessary, both external and internal criticism of the sources used should be made to ensure the accuracy of data and facts. Completeness of sources should possibly be ensured.

Teachings that are historically stated must be classified with the utmost precision and accuracy.

Key words: *E. Zeller, V. Chaloyan, G. Gabrielyan, history of philosophy, validity of knowledge, objectivity, external criticism, internal criticism, completeness of sources*

Ներկայացվել է՝ 18.12.2019
Գրախոսվել է՝ 26.12.2019
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020